## Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

1995 թ. նոյեմբերի 17-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ նախագահության ընդլայնված նիստ նվիրված ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆ. Մկրտիչ Գեղամի Ներսիսյանի ծննդյան 85-ամյակին:



Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Տ. Սարգսյանը: Ողջունելով հոբելյարին նա ասաց. «Հանրապետության գիտական հասարակայնությունը գոհունակությամբ նշում է Ձեր հոբելյանը: Դուք Ձեր գիտական գործունեությունը նվիրել եք հայոց պատմության հիմնական խնդիրների՝ հայ ազգային-ազատագրական շարժման, հայ-ռուսական հարաբերությունների, հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրմանը: Ձեր գիտամանկավարժական երկարամյա գործունեությունը վառ օրինակ և ոգեցույց է մեր երիտասարդ մասնագետների համար: Դժվար է գերագնահատել Ձեր գործունեությունը հանրապետության գիտական և ուսումնական կյանքի կազմակերպման բնագավառում: Դուք եղել եք հանրապետության Մայր բուհի՝ Երևանի Պետական Համալսարանի ռեկտորի, գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտի, հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պատասխանատու պաշտոններում: Դուք Ձեզ դրսևորել եք իբրև գործի հմուտ գիտակ ու կազմակերպիչ, իսկական ղեկավարի: Որպես մանկավարժ, դասախոս Դուք դաստիարակել եք երիտասարդ մասնագետների մի շարք սերունդներ: Դուք 1958 թ. հիմնադրեցիք և մինչև օրս խմբագրում եք ՀՀ ԳԱԱ «Պատմա-բանասիրական հանդեսը», մի պարբերական, որը դարձել է հանրապետությունում և նրանից դուրս լույս տեսնող հայագիտական ամենաճանաչված գիտական հանդեսը»:

Ձայնը տրվում է ՀՀ փոխնախագահ Գ. Հարությունյանին: Նա հրապարակեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրամանագիրը.

### «Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Հայ պատմագիտության զարգացման ասպարեզում ունեցած նշանակալի ավանդի, Հայաստանում գիտության և բարձրագույն կրթության կազմակերպման գործում ակնառու ներդրումների համար բազմավաստակ գիտնական, Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի ակադեմիկոս Մկրտիչ Գեղամի Ներսիսյանին պարգևատրել Մովսես Խորենացու մեդալով:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

Երևան, 15 նոյեմբերի 1995 թ.»:

Շնորհավորելով հոբելյարին հանրապետության փոխնախագահ Գ. Հարությունյանը ևս բարձր գնահատական տվեց ակադեմիկոս Ներսիսյանի պատմագիտական ու մանկավարժական գործունեությանը:

Նիստում կարդացվեց ակադեմիայի պատվավոր նախագահ, աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանի ողջույնի նամակը, որում մասնավորապես ասված է. «Մենք բոլորս լավ հիշում ենք, որ այս օրերին լրանում է Ձեր ծննդյան 80-ամյակը և շտապում ենք այդ առիթով շնորհավորել Ձեզ: Կյանքի այն դժվար պահերին, երբ շատ կարևոր է չմոռանալ ճշմարտությունը, այլ ավելին բարձրաձայն արտասանել այն, Դուք ցույց եք տվել ազնվագույն վերաբերմունք և մենք բոլորս, ով գիտի այդ Ձեր սերը դեպի ճշմարտությունը և Ձեր համարձակությունը այսօր բերում ենք Ձեր անունը որպես հասարակական գործչի և պատմաբանի օրինակ: Երկար ապրեք և հաջողությամբ աշխատեք: Ահա այն, ինչ մեր լավագույն մաղթանքն է, ամեն լուրջ ու ազնիվ հայ գիտնականին»:

Բարձրագույն կրթության և գիտության նախարարի պաշտոնակատար Վ. Դնունին դիմելով Ներսիսյանին ասաց. «Սիրելի հոբելյար, հանրապետության գիտական լայն հասարակայնությունը Ձեզ ճանաչում է որպես մեծահամբավ, վաստակաշատ գիտնականի ու հասարակական ակտիվ գործչի: Անգնահատելի է Ձեր ավանդը նաև գիտակազմակերպչական և ուսումնակրթական բնագավառներում: Դուք իբրև գրահրատարակչական գործի նվիրյալ հիմնադրել և 1958 թվականից ի վեր խմբագրում եք «Պատմա-բանասիրական հանդեսը», որը վաղուց արդեն Ձեր ջանքերով ձեռք է բերել միջազգային նշանակություն»:

Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Ռուբիկ Մարտիրոսյանը հրապարակեց համալսարանի գիտական խորհրդի, ռեկտորատի ու պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի ուղերձը: «Դուք արդեն շուրջ 60 տարի զբաղվում եք հայ ժողովրդի նոր և նորագույն պատմության բազմաթիվ կնճռոտ հիմնախնդիրների հետազոտությամբ՝ ընթերցողի դատին հանձնելով մեծարժեք և մնայուն աշխատություններ: Դուք այն հասարակագետ գիտնականներից եք, որ միշտ հավատարիմ եք մնացել բոլոր ժամանակների համար անհերքելի դարձած Ձեր գիտական սկզբունքներին և համոզմունքներին: Գիտահետազոտական բեղմնավոր գործունեությունը Դուք զուգակցել եք բեղմնավոր մանկավարժական աշխատանքին, կրթել, դաստիարակել և գիտական աշխատանքի [illegible] հասցրել պատմաբանների նոր սերունդ: Հատուկ գնահատականի է արժանի Ձեր մեծ ավանդը հանրապետությունում և նրա սահմաններից դուրս լայն ճանաչման արժանացած հայագիտական կարևոր հանդեսների՝ «Պատմա-բանասիրական հանդես», «Երևանի համալսարան», «Բանբեր» և այլ պարբերականների հրատարակությունը նախաձեռնելու, կազմակերպելու և բարձր մակարդակով ղեկավարելու գործում: Համատեղ աշխատանքում Ձեզ ճանաչող բոլոր գիտնականներն ու աշակերտները Ձեզ գիտեն որպես խիզախ, ազնիվ, սկզբունքային և բարի անձնավորություն»: Վերջում ռեկտոր Մարտիրոսյանը հայտնեց, որ գիտական ուսումնասիրությունների և բարձրագույն կրթության բնագավառում ձեռք բերած նվաճումների համար համալսարանի գիտական խորհուրդը անցյալ տարի Ներսիսյանին պարգևատրել է հատուկ մեդալով:

Ակադեմիայի պատմության ինստիտուտի անունից ողջույնի խոսք ասաց ակադեմիայի թղթակից անդամ Հ. Ավետիսյանը: «Ավելի քան վեց տասնամյակ է, սիրելի հոբելյար, ինչ Ձեր բեղմնավոր գործունեությամբ և անմնացորդ նվիրումով երիցս գնահատելի ավանդ եք ներդրել մեր ժողովրդի պատմության բազմաթիվ կնճռոտ հիմնահարցերի ուսումնասիրության և մշակման մեջ, Ձեր հիմնարար աշխատություններով դառնալով հայ պատմագիտական մտքի ականավոր ներկայացուցիչներից մեկը: Հայաստանում Դուք առաջինն էիք, որ որպես գիտնական-պատմաբան և քաղաքացի, խիզախեցիք դեռևս 1946 թ. պաշտպանած «Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ.» դոկտորական դիսերտացիայով, խախտեցիք տասնամյակների լռությունը, հիմք դնելով հայ ժողովրդի արևմտահայ հատվածի ազատագրական պայքարի, ինչպես նաև ցեղասպանության պատմության ուսումնասիրությանը: Դուք նշանավոր մասնագետ և ուսուցիչ, այժմ նահապետ, պատրաստել եք պատմաբանների մի ամբողջ բանակ, որն այսօր էլ ստեղծագործական լիցք է ստանում Ձեր առողջ պայքարից ու հոգու ներշնչանքից: Ձեր գիտական հսկայական վաստակը, գիտությանը մատուցած ծառայությունները միշտ բարձր են գնահատվել ժողովրդի և կառավարության կողմից: Կա ևս մի վաստակ, որը միշտ և ամենուրեք Ձեզ հետ է: Դա Ձեր ներսիսյանական կեցվածքն է՝ որպես ազնիվ, սկզբունքային քաղաքացի և հայրենասեր»:

Արևելագիտության ինստիտուտի անունից, պատմական գիտությունների դոկտոր Ն. Հովհաննիսյանը ասաց. «Այսօր հարկ ենք համարում երախտագիտությամբ հիշել, որ Ձեր նախա-

ձեռնությունը հանգելյրեց Ակադեմիայի կազմում նոր օջախի՝ Արևելագիտության սեկտորի հիմնադրմանը, որի առաջին ղեկավարն էիք: Հետագայում, երբ կազմավորվեց Արևելագիտության ինստիտուտը, Դուք մեծապես նպաստեցիք նրա բազմաբնույթ գիտական աշխատանքների ակտիվ ծավալմանը»:

Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը դիմելով Ներսիսյանին ասաց. «Մեծ բավականությամբ կատարում եմ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական անձնակազմի ցանկությունը և սրտանց ողջունում եմ Ձեզ ծննդյան 85-ամյակի առթիվ: Ձեր ստեղծած գիտական ծանրակշիռ մենագրությունները, պատմական փաստաթղթերի ժողովածուները իրենց անփոխարինելի տեղն են գրավել հայագիտության նվաճումների շարքում: Լինելով լայն մտահորիզոնի և գիտական բազմազան հետաքրքրությունների տեր անձնավորություն, գիտահրատարակչական գործի հմուտ կազմակերպիչ ու ղեկավար, Դուք Ձեր գործունեությամբ մեծ նպաստ եք բերել ոչ միայն պատմագիտությանը, այլև հասարակական բոլոր մյուս գիտություններին՝ այդ թվում նաև գրականագիտության զարգացմանը: Արդեն մոտ 40 տարի է, ինչ Դուք անփոփոխ խմբագիրն եք «Պատմա-բանասիրական հանդեսի», որն իր բարձրորակ հրապարակումներով այսօր իրավամբ նվաճել է լավագույն հայագիտական պարբերականի միջազգային համբավ: Իբրև «Բանբեր Երևանի համալսարանի» հասարակագիտական հանդեսի առաջին խմբագիր, ես շնորհակալությամբ եմ հիշում նաև այն մեծ աջակցությունը, որ Դուք իբրև համալսարանի ռեկտոր 60-ական թվականներին ցուցաբերեցիք այդ հրատարակության հիմնադրման համար: Մենք Ձեզ ճանաչում ենք իբրև սկզբունքային մարդու և գիտնականի, որի համար գիտության շահերը բարձր են ամեն ինչից»:

Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի ռեկտորատի, գիտական խորհրդի, պատմության ֆակուլտետի դեկանատի, հայոց պատմության ամբիոնի և ինստիտուտի կոլեկտիվի անունից ողջունեց ինստիտուտի ռեկտոր, ակադեմիկոս Գ. Բաղդասարյանը: «Մենք Ձեզ ճանաչում ենք որպես հայոց պատմության վաստակաշատ նահապետի, որի գիտական հիմնարար աշխատությունները անդրանիկության իրավունքով ուղի են հարթել մեր պատմության բազում հիմնահարցերի ուսումնասիրության ասպարեզում: Մեծ լուսավորչի անվան մանկավարժական բուհի պրոֆեսորադասախոսական կազմը երանությամբ է հիշում ինստիտուտում Ձեր աշխատած տարիները, Ձեր առինքնող անձը, դասախոսների, ուսանողների, ասպիրանտների նկատմամբ տածած Ձեր ջերմ ու հոգատար վերաբերմունքը, մանկավարժ-պատմաբանների և երիտասարդ հետազոտողների պատրաստման գործում Ձեր անդուլ ջանքերն ու ներդրած ծանրակշիռ ավանդը: Ձեր քաղաքացիական ու մասնագիտական խիզախությունը, չարիքի նկատմամբ բացարձակ անհանդուրժողականությունը, բյուրեղյա ազնվությունը, բարությունը ու օգնելու պատրաստակամությունը ուսանելի են Ձեր դաստիարակած սերունդների ու Ձեր շրջապատի մարդկանց համար»:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն Մ. Հարությունյանը ինստիտուտի գիտական ողջ անձնակազմի անունից շնորհավորելով Մ. Ներսիսյանին ասաց. «Ավելի քան 65 տարի է, ինչ Ձեր կյանքի եռանդն ու ավյունը ամբողջովին նվիրել եք հայագիտությանը, մասնավորապես հայոց նոր շրջանի պատմության հերոսական մաքառումների, ողբերգական իրադարձությունների, հեղափոխական դեմոկրատական շարժումների ուսումնասիրման մեծ գործին: Եթե մի պահ մեկդի դրվեն Ձեր գիտական մեծ վաստակն ու արգասավոր գործունեության մյուս բնագավառները, ապա միայն Ձեր հիմնադրած ու խմբագրած «Պատմա-բանասիրական հանդեսը», որն իր քառասնամյա հիմնարար արդյունքներով վաղուց է դարձել աշխարհի հայագիտական լավագույն պարբերականը, բավական է Ձեր անունն ընդմիշտ դրոշմելու հայագիտության մեծ երախտավորների շարքում»:

«Տնտեսագիտության ինստիտուտի ողջ կոլեկտիվը իր ջերմ ողջույնն է հղում Ձեր՝ ականավոր պատմաբանիդ ծննդյան 85 և գիտամանկավարժական ու հասարակական գործունեության 65-ամյա տարելիցի առթիվ,— ասաց ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Մ. Քոթանյանը: Չափազանց կարևոր է, որ Ձեր ուսումնասիրություններում կարմիր թելի պես անցնում է մեր ժողովրդի ապագայի նկատմամբ լավատեսությունը՝ հայ-ռուսական հարաբերություններում ամրակուռ կապեր կերտելու հանապարհով: Ցեղասպանության թեմատիկայով Ձեր հրապարակումներով, վերստին վերահրատարակվող փաստաթղթերի ժողովածուներով, Ձեր գիտական ղեկավարությամբ պարբերաբար հրավիրվող միջազգային գիտաժողովներով մարդկանց հիշողության մեջ անմար եք պահում և սերնդեսերունդ փոխանցում միլիոնավոր նահատակների հիշատակը:

Ակադեմիայի փոխպրեզիդենտ, հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Գ. Սարգսյանը նշեց, որ «Ներսիսյանը հսկայական կենսափորձ է կուտակել ոչ միայն իր առաջացած տարիքի բերմամբ, այլ առաջին հերթին շնորհիվ իր խառնվածքի, կյանքին մասնակցելու, ներազդելու, շտկելու իր անհագ ծարավի: Եվ չի կորցրել լավատեսությունը, ինչպես շատերը, այլ կյանքի մեջ միշտ դրականն է փնտրում և նույնը որոնում այդ դրականին ճամփա բացելու: Չի կորցրել իր հավատը մարդու նկատմամբ: Հայտնի է, որ Ներսիսյանը ստեղծեց «Պատմա-բանասիրական հանդեսը» և դարձրեց այն աշխարհիս լավագույն հայագիտական պարբերականը: «Հանդեսի» ցավերը նրա ցավերն են, հաջողությունները՝ նրա պարծանքը: Ցանկանում եմ մեր սիրելի հոբելյարին երկար, առողջ կյանք և իրեն հատուկ թարմության պահպանում»:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը իր շնորհավորանքի խոսքում ասաց. «Մեր վաստակաշատ հոբելյարը եղել է իմ և այսօրվա շատ պատմաբանների ուսուցիչը: 1946 թ. Երևանի համալսարանի պատմության ֆակուլտետի 2-րդ կուրսում ես լսեցի Ներսիսյանի դասախոսությունները: Թեև գաղափարական ոլորտում այն տարիներին իշխում էին վուլգար-սոցիոլոգիական դոգմաները, երիտասարդ դասախոսը համարձակորեն մեզ գիտելիքներ էր հաղորդում հայ ազատագրական շարժումների, ազգային կուսակցությունների, հայդուկային շարժման և այն ժամանակ արգելված պատմական շատ իրողությունների մասին: Նա մեր մեջ սեր արթնացրեց դեպի ազգային պատմությունը»:

«Ես ջերմորեն ողջունում եմ իմ ուսուցչին, որից դեռևս 40-ական թվականներին լսեցի ոգևորիչ խոսքեր հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի, հայդուկային շարժման մասին,— ասաց ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանը: Առանձնապես գնահատելի է մեր ուսուցչի սկզբունքայնությունը: Նա միշտ և հետևողականորեն զարգացնում է, օրինակ, այն ճշմարիտ միտքը, որ հայ ժողովրդի պատմական բախտը կապված է հզոր Ռուսաստանի հետ: Այդ առումով խիստ ուշագրավ են Ներսիսյանի այն աշխատությունները, որոնք վերաբերում են հայ-ռուսական հարաբերությունների պատմությանը և մասնավորապես ռուս դեկաբրիստներին»:

ԳԱ նախագահության, Գրադարանային խորհրդի և հիմնական գիտական գրադարանի ողջ կոլեկտիվի անունից հոբելյարին ողջույնի խոսքով դիմելով ակադեմիկոս Վ. Նալբանդյանն ասաց. «Ավելի քան 60 տարի Դուք ծանրակշիռ և հիմնարար ուսումնասիրություններով հարստացնում եք հայ պատմագիտությունը: Ձեր աշխատություններով փաստորեն սկիզբ դրվեց արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների գիտական ուսումնասիրությանը: Ձեր նախաձեռնությամբ և խմբագրությամբ լույս տեսած «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրության մեջ» փաստաթղթերի ժողովածուն իսկական սեղանի գիրք է հայ պատմաբանների համար»:

Ակադեմիկոս, կենսաբան Վ. Ղազարյանը նշեց այն, որ անվանի պատմաբան Ներսիսյանին միշտ հուզել են բնության պահպանության հարցերը. «Ես լավ հիշում եմ, թե ինչպիսի ցավով էր խոսում նա Սևանի պրոբլեմի և Հայաստանի էկոլոգիայի հետ կապված մի շարք հարցերի մասին: Ես բավականությամբ եմ հիշում նրա այն ելույթները, որոնցում նա պահանջում էր հատուկ ուշադրություն դարձնել գյուղատնտեսության հարցերին»:

Ջերմ և զգացմունքային խոսքեր ասաց հոբելյարի հասցեին Ներսիսյանի ծննդավայր Փարպիի գյուղխորհրդի նախագահ, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արմենակ Մկրտչյանը. «Մենք փարպեցիներս հպարտանում ենք, որ տվել ենք Ղազար Փարպեցի և Մկրտիչ Ներսիսյան: Ուզում եմ ընդգծել, որ Ներսիսյանի հայրը հայտնի էր մեր շրջանում որպես ազնիվ ու հայրենասեր քաղաքացի: Մենք ցանկություն ունենք ստեղծել հատուկ թանգարան, նվիրված մեր գյուղի նշանավոր մարդկանց»:

Հոբելյարին ջերմորեն ողջունեցին նաև Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտոր Ռ. Էզոյանը, ակադեմիայի թղթակից անդամ Մ. Զուլալյանը, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագիր Կ. Խուդավերդյանը, պատմական գիտությունների դոկտորներ Ա. Համբարյանը, Ռ. Սահակյանը, Վ. Ղազախեցյանը, պրոֆ. Մ. Կարապետյանը:

Նիստի վերջում, շնորհակալություն հայտնելով հավաքույթի մասնակիցներին, հոբելյարը կանգ առավ ժամանակակից հայ պատմագրության մի շարք հաջողությունների ու թերությունների վրա: Մենք, ասաց նա, դեռևս շատ անելիքներ ունենք հատկապես պատմության կեղծարարներին դատապարտելու և պատմական ճշմարտությունը վերականգնելու ուղղությամբ:

Ն. Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ